«Լոյս գուարթ», «Սուրբ Աստուած», «Ամէն Հայր Սուրբ», «Տեր ողորմես», «Ո՛ր էս ես, մայր իմ», «Կիլիկիա» եւ այլ տաղեր ու մեղեդիներ հնչեցին, կարծես ըլլային ջուրերը առուակին, «ինքնաբերական» հոսքով, սխորձալուր ու հեղատաճ: Ունկնդրելու պահ մը կը տարուի մտածելու. ինքն է երգողը, թէ ուրիշ ձայն մը կը հետեւի իրեն: Ոչ մէկ ճիգ ձայնային բարձրագոյն ոլորտներուն հասնելու: Վերջապէս, թաւալային փափկութիւն եւ նրբութիւն մը, որ աստղաշարու է: Իսկ ինք արժեւորած է իր ստացած, ինչ որուստ պարգեւաւած այս ոսկի նուէրը, ու զայն կը վերագրածնէ այսօր Արարիչին, ազգին, մշակութիւն հայոց, վասն փառաւորման Հայաստանեայց ժառանգութեան:

Հարկ է շնորհակալուիլ իրապէս Պայրագտարեանի եզակի արուեստը Լիրանանի ժողովուրդին եւ մեր գաղութին ծանօթացնելու միտքն ու ջանքը իրագործողները. գործին հովանաւորող Արամ Ա. կաթողիկոսը, հանդիսութեան նախագահ Գրիգոր եւ Սիւրի Շուշանեան ամուր, խմբավար հայր Սեդրակը, յայտագիրին մասնակցի նուագախումբին փողահար, ջութակահար, սրնգահար ու այլ գործիքները հնչեցնող անհամները, Կիլիկիոյ կաթողիկոսարանի ղարկանքի ժառանգաւորաց երգչախումբը, որոնք միասնական ջանքերով հայ թէ տեղացի երաժշտասէրներ, պատական հիւրեր անգամ մը եւս հաստատեցին Հայ ժողովուրդի դարաւոր մշակոյթին երկնատուր եւ քաղաքաւոր երաժշտութիւնը, որ անգամ մը եւս հնչեց մեր հոգիներուն մէջ, մեզ հեռացնելով աղմկոտ այս օրերու մղձաւանջային ժխորէն, յիշեցնելով թէ՛՝ այս է մնայունը, հետեւեցէք այս ձայներուն...

Advertisement for AFHIL watches. Text: ONE SECOND IS ENOUGH... Արաւսը կը Պատահէ Երկուրեւեքի Մը Մէջ... ...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՐ ՆԵՐԿԱՅ ԵՄԻ ԱՄԵՆ ԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ. AFHIL logo and contact info: Ափտ-ի Շէք, Բ. Յարկ, Գեո. եւ Զարս. (01) 262231-242556-242557





# ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Լիբանանեան կեանքի երևոյթներ


## ԶՐՕՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՄԻՍՆԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ՝

### ԼԻԲԱՆԱՆՅԻ ՊԱՆԴՈՎԱՏԻՐԵՐ ԿԸ ՆԱԽԱՏԵՍԵՆ «ԶՐՕՍԱՇՐՋԱՅԻՆ ՈՍԿԵԱՅ ՏԱՐԻ ՄԸ»

Լիբանանեան զանազան երեւոյթներու նման զրօսաշրջութիւնը եւս կը հանդիսանայ վիճաբարոյց մարզ մը: Կարգ մը վաճառականներ եւ այս բնագաւառին մէջ գործողներ կը հաստատեն, որ այսօր Լիբանանի զրօսաշրջութիւնը կարելի է նկատել բաւական բարգաւաճ, զարգացած եւ տեղացի ու օտար զրօսաշրջիկները ընդունելու եւ անոնց հանգիստն ու հաճոյքը ապահովելու ընդունակ մարզ մը, մինչդեռ ուրիշներ կ'արտայայտեն այն կարծիքը, թէ հակառակ թափուած ճիգերուն եւ ի գործ դրուած ծրագիրներուն՝ զրօսաշրջալիս երկիր կարելի չէ նկատել Լիբանանը:

Ամառը կը գտնուի Լիբանանի դրան սեմին եւ կարգ մը լիբանանցիներ, որոնք կը գործեն զրօսաշրջալիս մարզին մէջ, կը սպասեն որ շարժումը աշխուժանայ եւ մեծ թիւով այցելուներ Լիբանան գան՝ իրենց արձակուրդը անցընելու:

Պահտունի պանդոկատէրը կը նախատեսեն, որ այս տարի Լիբանան ապրի զրօսաշրջալիս իր ոսկեայ տարին, «ինչպէս կ'ըլլար պատերազմի տարիներէն առաջ»: Անոնք կը վկայեն, որ ձմրան եւ աշնան մեծ թիւով օտարներ Լիբանան գտնուած են, հետաքրքրուած են ամրան տեղի ունենալիք փառատօններով:



Հանգիստը թիւներով ուզած են գիտնալ վարձու տուներու գինները եւ այլն: Ըստ անոնց, զրօսաշրջիկները զմայլած են Լիբանանի կլիմայով, օդով եւ զբօսելու զանազան վայրերով եւ տուեալներով: Ասոր կողքին, պանդոկատէրերը կը հաստատեն, որ կան մասնաւոր հաստատութիւններ, որոնք յատուկ շրջապատներ կը կազմակերպեն եւ կը գործակցին իրենց հետ, ինչ որ յաւելեալ յոյս կը ներշնչէ աւելի լաւ հանգրուանի մը: Անոնք կը նշեն, որ արդէն պանդոկներու սենեակներուն կէսը վարձուած է եւ համաձայնութիւններ կը կնքուին միւսները վարձու տալու համար:

Զրօսաշրջալիս մարզին մէջ գործողները նաեւ կ'անդրադառնան այն իրողութեան, որ Պէյրութի եւ լեռնային շրջաններու բոլոր կեդրոնները, հանգստավայրերը, պանդոկներն ու ճաշարանները, ինչպէս նաեւ այս մարզին առնչուող զանազան հաստատութիւնները վերանորոգուած եւ վերասարքաւորուած են, օժտուելով այն բոլոր տուեալներով, որոնք անհրաժեշտ են զրօսաշրջիկները ներգրաւելու եւ անոնց հանգստաւէտ ու արդիական պայմաններ ապահովելու համար: Ըստ անոնց, օտար զրօսաշրջիկներուն Լիբանան հոսքին պատճառներէն կը նկատուին Միացեալ Նահանգներու 11 Սեպտեմբերի յարձակումները: Ասոր կողքին, անոնք կը նշեն, որ այս բնագաւառին զարգացման եւ բարգաւաճման մէջ մեծ եւ գնահատելի դերակատարութիւն ունին բոլոր շրջաններու քաղաքապետարանները, որոնք ոչինչ կը խնայեն շրջաններու մաքրութեան եւ բարեգարգման համար:

Լիբանանի զրօսաշրջութեան օժանդակող ազդակներէն մէկը կը հանդիսանայ նաեւ երկրի շուկան, որովհետեւ անիկա կը գրաւէ մեծ թիւով վաճառականներ եւ առեւտրականներ, որոնք տարին քանի մը անգամ շրջան կ'այցելեն, քանի մը ամիս կը մնան մայրաքաղաքի պանդոկներուն մէջ եւ իրենց դրամը կը ներդրեն զանազան ծրագիրներու մէջ: Այս վերջինները, ինքնաբերաբար, կու գան իրենց արձակուրդը Լիբանանի մէջ անցընելու եւ իրենց գործերուն հսկելու:



Ալէյի մէջ, վերոյիշեալ աշխատանքներուն կողքին յիշատակելի է նաեւ հոն գտնուող աւանդական հին շուկան, զոր տեսնելու համար մեծ թիւով եւրոպացիներ շրջան կ'այցելեն եւ նոյնիսկ հոնկէ սենեակներ կը վարձեն: Ալէյի զրօսաշրջալիս վայրերու պատասխանատուները կը հաստատեն, որ ամրան արձակուրդին համար զրօսաշրջիկներու կատարած ապահովումները կը կազմեն անցեալ տարուան կրկինը եւ տակաւին կը շարունակուին պահանջները: Անոնք նաեւ կը նշեն, որ շրջանին մէջ եղած արհեստագործութիւնները, մանաւանդ անոնք, որոնք այլ երկիրներու մէջ տարածուած չեն, մեծապէս կը հետաքրքրեն օտարները եւ կը ներգրաւեն զանոնք:

Մայրաքաղաքի պարագային, պայմաններն ու տուեալները կը տարբերին լեռնային շրջաններէն: Հակառակ Պէյրութի ապականած օդին, մեծ թիւով զրօսաշրջիկներ շրջան կ'այցելեն եւ ամիսներով հոն կը մնան: Շրջանի մեծ պանդոկներուն տէրերը կը հաստատեն, որ ձմրան ամիսներուն եղած են շրջաններ, երբ պանդոկը ամբողջութեամբ վարձուած է եւ պարագ ոչ մէկ սենեակ մնացած է: Անոնք կը նշեն, որ թէեւ շատեր կը խօսին Լիբանանի թերութիւններուն եւ խոցելի կողմերուն մասին, սակայն Լիբանան օժտուած է զանազան տուեալներով, որոնք կը պակասին այլ երկիրներու: Լիբանանի լեռնային շրջաններու մէջ ծովեզերքին մօտ ըլլալը մեծ առաւելութիւն է երկրին համար, որովհետեւ նոյն օրուան ընթացքին զրօսաշրջիկը կրնայ թէ՛ ծով երթալ եւ թէ՛ գիւղ այցելել:

Ասոր կողքին պէտք է նաեւ յիշել, որ վերջին շրջանի Լիբանանի մէջ տեղի ունեցած մեծ թիւով համազուտարներ եւ խորը ընթացքով պիտի շարունակուին նաեւ յառաջիկայ ամրան: Կայ նաեւ այն իրողութիւնը, որ դէպի եւրոպական երկիրներ եւ Միացեալ Նահանգներ ճամբորդութիւնը բաւական դժուարացած է վերջին շրջանին, հետեւաբար Միջին Արեւելքի զրօսաշրջիկները յատկապէս իրենց հայեցքը կ'ուղղեն դէպի Լիբանան:

Վիճակագրական տուեալներու համաձայն, Լիբանանի 5 աստղանի պանդոկներուն գործը կ'աշխուժանայ տարուան որոշ շրջաններուն, սակայն անիկա զգալիօրէն կը պակասի այն օրերուն, երբ տօներ չկան, մինչ 4 եւ 3 աստղանի պանդոկները զարգած կ'ըլլան ամբողջ տարուան ընթացքին եւ անոնք իրենց զագաթնակէտին կը հասնին ամրան:

Զրօսաշրջալիս այս մարզին մէջ ներառուած են նաեւ քաղաքի եւ լեռնային շրջաններուն մէջ հաստատուած ճաշարաններն ու վաճառատուները: Պէյրութի եւ յատկապէս կեդրոնական Պէյրութի ճաշարանատէրերը կը հաստատեն, որ իրենք հարցեր չունին տարուան ամբողջ ընթացքին, որովհետեւ իրենք կ'ախտալ չեն օտարներէն եւ կը բաւարարուին «տեղական զրօսաշրջիկներու» այցելութիւններով: Ըստ անոնց, այս վերջիններուն հոսքը ամբարն աշխուժ է, որ անոնք նոյնիսկ կարգի կը սպասեն եւրոպական ճաշեր ուտելու եւ հաճելի ու հանդարտ պահեր անցընելու համար:

Սակայն, պարագան նոյնը չէ լեռնային շրջաններուն մէջ, ուր կեանքը որոշ չափով կը սառի ձմրան եւ կրկին կը սկսի ամրան: Այդ շրջանները անհամբեր կը սպասեն զարնան եւ ամրան, որպէսզի զրօսաշրջիկներն ու քաղաքացիները գիւղ բարձրանան եւ զայն ծաղկեցնեն:

Լիբանանի զրօսաշրջութեան այս պատկերը կու գայ ըսելու, թէ հակառակ բոլոր թերութիւններուն եւ կենսոլորտի պահպանման կարգակերպութիւններու կատարած ծիսական յայտարարութիւններուն, Լիբանան կը մնայ առաւելութիւններով, մեղմ կլիմայով եւ զրօսաշրջալիս իւրայատուկ առիթներով ու ջերմ միջոցառով օժտուած երկիր մը, ուր կ'յաճախեն եւ իրենց արձակուրդը կ'անցընեն թէ՛ օտարները եւ թէ՛ արարները:

# ՄՆՆՊԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

## ՄԱՐԳԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԻ ԻՏԷԱԼ ԿՇԻՌՔԸ

Մարդկային մարմինի իտէալ կշիռը, այլ խօսքով՝ ծանրութիւնը չունենալը դիւրին գործ չէ եւ կ'ենթադրէ լուրջ, հետեւողական աշխատանք, ինչպէս նաեւ՝ որոշ զոհողութիւններ:

Լաւ, բարձեւ մարմին ունենալու հարցը տղոց թէ՛ աղջկանց մօտ հաւասարապէս, առաւելաբար կը ծագի գարնան, երբ կը սկսին պատրաստութիւնները ամրան եղանակին ծով երթալու, ամառնային հագուելիքի «գտնում»ներ կատարելու: Մարմինին տնտեսութիւնը, գիրութիւնը, տղոց պարագային՝ կախուած փորը աւելի շուտ մէջտեղ կ'ելլէ, կ'երեւի եւ նեղութիւն կը պատճառէ: Անշուշտ, ձմեռը աւելի կը գիրնանք, որովհետեւ բնական պահանջ մղուած՝ աւելի կ'ուտենք, անհաշիւ քալորի կը ստանանք եւ որովհետեւ ձմեռնային հագուելուներուն մէջ կորսուած կ'ըլլանք՝ շատ ականջ չենք տար մեր կշիռքին, որուն ինչպէս ըսինք՝ կ'անդրադառնանք ամրան սկիզբը:

Միացեալ Նահանգներու մէջ կատարուած հարցախոյզները կը փաստեն, որ երկարակեցութիւնը կապ ունի նաեւ մեր կշիռքին եւ ծանրութեան հետ: Արդարեւ, հետեւելու համար անոր, մասնագէտներ իտէալ կշիռքի հարց դրած են, այդ իսկ պատճառով ձմեռնային թիւնը եւ ճշդուած են՝ համաձայն հասակին:

Կշիռքի հարցը կը տարբերի բնականաբար տղոց եւ աղջկանց միջեւ: Տղոց մօտ, գիրութիւնը, հետեւեցէ՛ք անոնց եւ պիտի յաւելեալ կշիռքը ի յայտ



կու գայ առաջին հերթին ստամոքսի կախուածութեան, ապա՝ վիզին եւ ուսերուն անմիջապէս տակը գտնուող «իւղոտ» միսերուն կախուածութեան: Անկախաբար երեւոյթէն, տղոց մօտ այս ընթացքը վտանգաւոր է բժշկականօրէն՝ անիկա առաջին հերթին կը բարձրացնէ հաւանականութիւնը սրտի տագնապին, կրնայ ներքին գործարաններու (լեարդ, աղիք, եւ այլն) բարդութիւններ յառաջացնել:

Հետեւաբար, կշիռքը իտէալ պահելը անհրաժեշտ է պէտք է հետեւել ուրեմն յատուկ տասնականներ, որոնք հասարակներուն մէջ կ'ըլլան «հաստութիւն»: Այդ յատուկ ցուցատախտակները կարելի է գտնել զանազան մասնագէտներու մօտ, բժիշկներու կամ նոյնիսկ դեղարաններու մօտ: Հետեւեցէ՛ք անոնց եւ պիտի չզղջաք:

Յատկապէս տղոց պարագային, գիրութիւնը, կամ աւելի ճիշդ՝ յաւելեալ կշիռքը ինչ բանի հետեւանք է: Պատասխանը յստակ է ու մեկին ստացած սնունդին դիմաց նոյնքան ջերմութ չվատնելու, «չայցելու»: Անշուշտ, զբարեկեցութեամբ ջուր խմելը շուտ նաեւ ուտելիքին անպայմանօրէն կ'ազդեն անբաղձալի գիրութեան:

Չա՞րք: Մննդականոն ու միայն սննդականոն, առաւել՝ մարզանք: Անմիջապէս յայտնենք, որ նիւտրալ շատ դիւրին բան է, բայց նիւտրալ մնալն է դժուարը: Շատ արագ կրնայք 3 քիլո նուազիլ, բայց նոյնքան արագ՝ 5 քիլո աւելնալ, երբ կը վերադառնաք

ՔԱՐԼԱ ԵԱՐՏԵԱՆ

### TANIA TRAVEL

Sodeco Square - Rue de Damas  
Tel: (02) 614959/0/7 - Fax: (02) 616661  
Rue Sidani - Face Cinema Jeanne d'Arc  
Tel: (02) 739679/82/3/4 - Fax: (02) 340673  
Website: www.taniatravel.com

### CHARTERS

PALMA DE MALLORCA	8 jours	\$ 720
ESPAGNE, PORTUGAL & MAROC	7 prog. 8 a 15 jours	\$ 955
Departs tous les Mardis		
RHODES	8 jours	\$ 355
MYKONOS	8 jours	\$ 500
Departs tous les Lundis		

Jel-4-Dib 710305/4/7  
013781614959/82040 - 816661/73070  
Jel-4-Dib 942704 - 943308  
Zahle 908547 - 902592  
Telipoll 627755/602669 - Amieson 950075

## NARRA TRADING & GENERAL SERVICES CO. S.A.R.L.

ՆԱՐԱ ԹՐԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.  
(Սեփականատը՝ Վաիտ Մանուկեան)

### ՎԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆՔԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒԷԻՆԵՐՈՒ ԱՊԱՆՈՎՈՒՄ

- Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
- Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
- Ստանձնաւոր գիներ, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:

Պառնիք, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» Կրամատան շէնք, 4րդ յարկ: Ընդ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

### «ԱՉԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգային» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանումը հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ 5:00:

ՄԱՀԱՉԳՆԵՐԸ բացառութիւն է: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Քաղեց ՆՈՐԱ ԲԱՐՏԵՂԵԱՆ



# Կանոնական

## ՆԻՀԱՐՆԱԿ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԱԿ

Ամառը կը մօտենայ, շատեր կ'ուզեն բարձու երեւիլ իրենց լողագոգեստներուն մէջ, ուրիշներ կը փափաքին ֆիզիքայէս եւ հոգեպէս երիտասարդանալ...

Այս բոլորը անկարելի չեն սննդագետ - բժիշկ ժամ - Միշէլ Քոհէնի համար, պայմանով որ խախտենք մեր հիմ սովորութիւնները եւ հետեւիմք առողջ սննդակառուցի մը:

Արդարեւ, «Մառուար Մեկրի» (Գիհարճալ գիտնալ) գիրքին մէջ Քոհէնը ընթերցողին ուշադրութեան կը յանձնէ, թէ որոշ ուտելիքներ (պտուղներ եւ բանջարեղէններ) կը կանխարգիլեն զանազան հիւանդութիւններ:

Քոհէնը նաեւ հետաքրքրական եւ օգտակար թելագրանքներ կը կատարեն տոկուն ակունքներ, փայլուն մորթ եւ առողջ մազեր ունենալու համար:

Այսօրուան սիւնակով կու տանք «Մառուար Մեկրի» գիրքէն փոքր բաժին մը:

- 1 -

### ԿՈՒՉԵՄ ՓԱՅԼՈՒՆ ԵՒ ՄԵՏԱՔՄԵԱՅ ՄՈՐԹ ՈՒՆԵՆԱԿ...

Նախապատուութիւնը տուէ՛ք Պէ. խումբի կենսա-նիւթերուն եւ սելենիումին: Կանաչ ծաղկակաղամբը (պրոքթի), սոււնկը, շոմինը, ամբողջական հացահատիկները, անտիլը (հազարի տեսակ մը) եւ ազատքեղը առատօրէն կը պարունակեն վերոյիշեալ կենսա-նիւթերն ու հանքայինները:

Միւս կողմէ, պէթա - քարոթէնն ու զինկը նոյնքան օգտակար են մեր մորթին համար, զանոնք կրնանք գտնել ստեպլինին, շոմինին, պրոքթիին, ոսպին, սոււնկին եւ ծիրանին մէջ:

- 2 -

### ԿՈՒՉԵՄ ՏՈԿՈՒՆ ԱՎՈՒՆԵՐ ԵՒ ՈՍԿՈՐՆԵՐ ՈՒՆԵՆԱԿ...

Այս պարագային պէտք է ուտել ճարպաթթուներով, Ա. եւ Տէ. կենսա-նիւթերով, կիրով կամ մականեղիւնով հարուստ ուտելիքներ, ինչպէ՛ս՝ կարագը, հակիթթը, կաթնեղէնը, շոմինը, ազատքեղը, սեխը, ճուղի, պանիրը, եւ այլն:

- 3 -

### ԿՈՒՉԵՄ ՄՏՔՈՎ 20 ՏԱՐԵԿԱՆ ԸԼԼԱԿ...

Ա՛յ, Պէ3, Պէ5, Պէ12 եւ էօ կենսա-նիւթերը, ինչպէս նաեւ սելենիումը եւ երկաթը շատ մեծ դեր կը կատարեն մեր յիշողութիւնը զօրացնելու եւ մտահոգութիւնն ու հոգեկան անկումը չէզոքացնելու համար: Հետեւաբար առատօրէն պէտք է սպառել ամբողջական հացահատիկներ, սխտոր, սոխ, լոլիկ, կիտրոն, ծիրան, եւ այլն:

- 4 -

### ԿՈՒՉԵՄ ՏՈԿՈՒՆ ԵՂՈՒՆԳՆԵՐ ԵՒ ԱՌՈՂՉ ՄԱՉԵՐ ՈՒՆԵՆԱԿ...

Այս պարագային թելադրելի է ուտել աւոքասո, պրոքթի, թթիմոր պարունակող ուտելիքներ եւ ամբողջական հացահատիկներ: Ասոնք հարուստ են սիսթինով, սելենիումով, Պէ8 եւ Պէ2 կենսա-նիւթերով:

- 5 -

### ԿՈՒՉԵՄ ՀՈՐՄՈՆԱՅԻՆ ՀԱՒԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՍ ՊՏՆԵԼ...

Ա. եւ էօ. կենսա-նիւթերը, զինկը, մականեղիւնը, կիրը եւ սելենիումը կ'աշխուժացնեն հորմոններու արտադրութիւնները եւ կ'աւելցնեն մարմնին ուժակա-նութիւնը:

Հետեւաբար թելադրելի է ուտել ամբողջական հացահատիկներ, բուսական ձէթեր, շոշմայ, սոյա, ստեպլին, հակիթթ, կաթնեղէն եւ ոսպ:

## ՓՈՐՁ ԸՆԹԱՐԱՆ

### ԻՆՉՊԷՍ ԿԸ ԴԻՄԱԳՐԱՄԷՔ ԶԵՐ ԱՌՈՐԵԱՅ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ոմանք դժուարութիւններուն դիմաց կը յուսալքուին, ուրիշներու պարագային նոյն այդ դժուարութիւնները խթանի կը վերածուին: Կարգ մը անձեր անտարբերութիւն կը ձեւացնեն, ուրիշներ ալ իրենք զիրենք զոհ կը նկատեն այդ դժուարութիւններուն...

Ո՞ր խումբին կը պատկանիք արդեօք, ի՞նչպէս կը դիմագրաւէք առօրեայ դժուարութիւնները: Իմանալու համար պատասխանեցէ՛ք փորձ հարցարանին՝ ընտրելով հաւանական 3 պատասխաններէն յարմարագոյնը:

1

● Փուռ կը մտնէք ձեր սիրած ֆրանսական հացը գնելու, բայց... սպառած է:

Ա. - Փոխարէնը արաբականը կը դնէք եւ դուրս կ'ելլէք:

Բ. - Առանց բան մը գնելու դուրս կ'ելլէք:

Գ. - Քանի մը փուռ կ'այցելէք, մինչեւ որ գնէք:

2

● Ձեր սիրած անձէն հետեւի կը սպասէք:

Ա. - Մինչ այդ գործով մը դուք ձեզ կը զբաղողն էք:

Բ. - Կ'որոշէք 5 վայրկեան եւս սպասել, ապա՝ տունէն մեկնել:

Գ. - Հեռաձայնի մօտը դաժուած կը սպասէք:

3

● Գրասենեակին մէջ նոր պաշտօնեայ մը ձեր տեղը գրաւած է:

Ա. - Կը զայրանաք առանց բան մը ըսելու:

Բ. - Տեղէն կը հանէք՝ բացատրելով, որ հոն ձեր տեղն է:

Գ. - Կը ձգէք, որ նստի:

4

● Ձամբան մեծ բեռնակառքի մը ետեւ մնացած էք:

Ա. - Կը մտածէք՝ ժամանակ ունի՞ք կենալու եւ սուրճ մը խմելու մօտակա անոջին սրճարանին մէջ:

Բ. - Վտանգը աչքի առնելով իրենց հիւթով փոխադրել խորունկ ամանի մը մէջ: Աւելցնել կիտրոնի հիւթը եւ նարնջենիի ջուրը, երեսը ցանել շաքարով, եւ սառնարանը պահել առնուակն 2 ժամ: Սառնարանը պահել նաեւ նարինջի կեղեւները: Հրամայելու պահուելու պտուղները զգուշու-

նելով կ'անցնիք անոր: Գ. - Մեծ համբերութեամբ ետեւէն կ'երթաք:

5

● Ձեր մեկ առաջարկը կը մերժուի:

Ա. - Չհասկնալ կը ձեւացնէք:

Բ. - Բացատրութիւն կը պահանջէք:

Գ. - Կ'արհամարհէք:

6

● Ձաշարանց էք եւ տակալին արկարարները հասած չէ, իսկ դուք երթալիք տեղ ունիք:

Ա. - Կը պատրաստուիք մեկնելու:

Բ. - Կը հրաժարիք ձեր ծրագիրէն:

Գ. - Կը յուսահատիք ու կը զայրանաք:

7

● Երեկոյեան կ'ուզէիք ձեր ամուսինին հետ գլուխ-գլխի նստիլ, բայց ան արդէն քնացած է: Կը մտածէք՝

Ա. - Զիս առաջուան չափ չի սիրէք:

Բ. - Մեղք է, յոգնած է, հանգիստի պէտք ունի:

Գ. - Հոգեբուս վերջը, պիտի արթնցնեմ:

8

● Երբ ձեր արկարարին մասին կը մտածէք...

Ա. - Շատ կը խանդավառուիք:

Բ. - Վերապահ կը մնաք:

Գ. - Յոռետես կը դառնաք:

9

● Ձեզ գործէ արձակած են:

Ա. - Ամէն գնով կը պայքարիք:

Բ. - Կու լաք:

Գ. - Նոր գործի մը մասին կը մտածէք:

10

● Ամառը եւ ծովու եղանակը մօտեցաւ, բայց, ափսոս, գիրացած էք:

Ա. - Անմիջապէս անդադարնի կը հետեւիք:

Բ. - Ծովու փոխարէն լեռ կը բարձրանաք:

Գ. - Դուք ձեզմէ կը դժգոհիք:

11

● Ձեր 10րդ տարեդարձին օրը ի՞նչ մտածեցիք:

Ա. - Հեռու անցեալին կը պատկանի, բան չէք յիշեր:

Բ. - Ի՞նչ հաճելի է մեծնալը:

Գ. - Որքա՞ն ուշ կը մեծնամ:

12

● Բոլորը կը գովեն գիրք մը, գոր դուք չէք հաւանած:



Ա. - Կը փորձէք ամէն ձեւով պատճառարանել ձեր կեցողութիւնը:

Բ. - Կը մտածէք, որ ամէն մարդ ազատ է իր կարծիքը յայտնելու:

## ԳԵՂԵՑԿԱԳԻՏԱԿԱՆ

### «ԾԻԱԾԱՆ» ԱԶՔԵՐ

Այս ամառ շատ նորոյթ է «ծիածան» շաքար, այսինքն՝ կոպը կանաչով դեղին, թիւրքուագով նարնջագոյն, կապոյտով վարդագոյն ներկելը, բայց յաջող արդիւնքի մը հասնելու համար հետեւեցէ՛ք ստորեւ ներկայացուած 3 հանգրուաններուն:



1) Նախ ձեր ցուցամատով ամբողջ կոպին վրայ տարածեցէ՛ք համեմատաբար մեղմ գոյնը, օրինակ՝ թիւրքուագը:

2) Աչքի շաքարի յատուկ վրձինով մը կոպին երկու ծայրամասերը ներկեցէ՛ք երկորդ գոյնով (այս պարագային նարնջագոյն): Նոյն գոյնով ներկեցէ՛ք նաեւ վարի թարթիչներուն եւ կոպին եզերքը:

3) Ուրիշ վրձինով մը կոպին կեդրոնը՝ թիւրքուագ գոյնին վրայ «նաքրէ» վրձինի հարուած մը տուէ՛ք, ապա մասքարայով ձեւաւորեցէ՛ք թարթիչները: Անկասկած, որ թիթեանիկի թեւեր յիշեցնող գեղեցիկ կոպեր պիտի ունենանք:

## ՉԵՈՔԻ ՅԱՏՈՒԿ ՄԱՐԶԱՆՔ

Ինքնաշարժ վարելը, համակարգիչի վրայ աշխատելը, գրելը, ապրանք կրելը, խոհանոցային աշխատանքը... այս բոլորը կը յոգնեցնեն թեւերն ու ձեռքերը:

Օրական քանի մը վայրկեան ձեռքի յատուկ մարզանքը որոշ հանգստութիւն կը շնորհէ:



1) Ձախ թեւը հորիզոնական երկարեցէ՛ք, ափը բաց եւ դէպի վեր: Աջ ձեռքով հրեցէ՛ք մատները դէպի ձեռքի՝ առանց անշուշտ ձախ թեւին արմուկը ծռելու: Այդ դիրքով մնացէ՛ք 20 երկվայրկեան, ապա փոխեցէ՛ք թեւերուն դիրքերը:

2) Աջ թեւը հորիզոնական երկարեցէ՛ք, ձախ ձեռքով բռնեցէ՛ք աջի բաց ափը, այնպէս մը, որ ձախ ձեռքին ըթմատը աջ ափին կեդրոնը ճնշէ եւ ափը փոխի ի փոխ 15 երկվայրկեան դէպի աջ ու ձախ դարձուցէ՛ք:

## Պատրաստե՛ք ՇՈՒԾԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

### Ի ՊԱՏԻ ԱՉԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՆԳԱՄՆԵՐՈՒՆ

### Ընդ բարձր հովանաւորութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳ

### Կատարողութեամբ՝ ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ «ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ» ՄԱՍՆԱՃԻԴԻ «ԿՈՍԻՏԱՍ» ԵՐԳՉԱՆՈՒՄԲԻՆ (Այնճար) Դեկվար՝


### ՊԱՐԳԵՒԻ ԹԱՍԼԱԳԵԱՆ Ուրբաթ, 7 Յունիս 2002ին, Երեկոյեան ժամը 8:30ին, կաթողիկոսարանի շրջափակին մէջ:

ՍՈՒՏԵՔ ԱՉՍԵ Է

## ՆՈՒՆԱԳԻՐ

### ԵԼԱԿՈՎ ՆԱՐԻՆՉ

Չորս անձի համար անհրաժեշտ են.- 2 նարինջ 500 կրամ ելակ Կիտրոն մը Թարմ անանուխի տերեւներ Ապուրի դգալ մը շաքար Ապուրի 2 դգալ նարնջի ջրով ծաղիկի ջուր



րը իրենց հիւթով փոխադրել խորունկ ամանի մը մէջ: Աւելցնել կիտրոնի հիւթը եւ նարնջենիի ջուրը, երեսը ցանել շաքարով, եւ սառնարանը պահել առնուակն 2 ժամ: Սառնարանը պահել նաեւ նարինջի կեղեւները: Հրամայելու պահուելու պտուղները զգուշու-

թեամբ խառնել, ապա լեցնել նարինջներուն մէջ եւ երեսը ցանել շաքարով անանուխի տերեւներով: Այս պատրաստութիւնը հազիւ 91 ջերմութիւն կը պարունակէ եւ առաւելութիւնը ունի Սէ. կենսա-նիւթի հալածութիւնը: Կարելի է շաքարը փոխարինել մեղրով:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՄԵՃ...»

Շարունակվում է՝ 5րդ էջէն

Թիւնն էր շունչ ու ոգի հաղորդում Ապտուլ Համիտի հոգեգաւաակ Մուսթաֆա Բեմալին, որը Ռուսաստանի հետ 1922 թուականի Մարտ 16ին կնքած պայմանագրից յետոյ էլ չէր հրաժարուել հայերին ոչնչացնելու թրջական ազգային քաղաքական ու թեան սկզբունքներին:


Իբրև եզրակացու թիւն, կ'ուզէի արտայայտուել, որ փորձելի ներկայացնել Գալոյեանի վերոյիշեալ երկրորդ աշխատութեան կարեւորութիւնը, որ ամփոփուած է 21 գլուխներում, թէ կարելի է համարել մի «հանրագիտարան», նաև, Հայ Դատի բարեխաղով լուծման կապակցու-

թեամբ կարեւոր մի «ուղեցոյց»:

Ըստ իս, հեղինակը ընթացողին է թողնում եզրակացնելու, որ ճիշդ է, որ մեծ պետութիւնների քաղաքական գործելակերպին պիտի վերագրել Հայ Դատի անխաղով լուծման պարագան, բայց եւ այնպէս, պիտի չմոռայ եւ միշտ պիտի նկատուենալ Հայկական պատուիրակութեան քաղաքական դերը եւս, խուսափելու համար Պօղոս-Նուպար փաշաների նման անջատողական կրկնութիւններին:

Ներկայիս, ցայտուն օրինակներին մէկն է վերջերս, իր հերթին ձախողութեան մատնուած թուրք-հայ երկխօսութիւնը:

The Revolutionary Japanese Air Conditioners



DYNAMIC made in Japan



I like it Powerful Ideal Cool DYNAMIC

- 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
• EXCEPTIONALLY QUIET OPERATION
• LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
• FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
• UNBEATABLE PRICES

GAS G. Ayanian & Sons

Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9 Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԻՐ ԴՐԱՆՏԱՎԱՅՐ ԱՆԱԿԵՐՏԱԿԱՆ, ՄԱՐԱԿԱՆ ԵՒ ԿԱԶՈՒՐԱՆ ԱՆՆԱԿԱՆ ԶՈՅՑ ԵՐԱՊՈՏՅՈՒՆԵՐ ԴԵՊՈ

ՍԵՒՎՆ ԵՒ ԱՐՁՆԻ Ա. - ԵՆ 29 ՅՈՒՆԻՍ: Բ. - ԵՆ 30 ՕԳՈՍՏՈՍ 21 ՕՐ: 10 ՕՐ ՊՏՈՅՏՆԵՐ ՕՐԱԿԱՆ 4 ԱՊՐԱՄ ՈՒՏԵԼՈՎ, ԿԻՉԱՆ, ՏՈՒՐԵԲՐԸ, ՕՐԱՆԱԿԻ ՏՈՍԱԸ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՈՒՍԻՆ ԱՊՏԱԼԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Յունիս 2002, Նոր Մարտի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԼՈՒՍԻԱ ԾԻՐԱՆԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 9 Յունիս 2002, ԱԳՔԻԼԻԱՍԻ Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ա. պատարագի:

STUDIO Lantern
• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարահանումներ
Հեռ. 01-268866 Էլ. 03-695399

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ
ԱՅՍ ԱՍԻՍ ՅԱՏՈՎ ԳԻՆ
ԲՈԼՈՐ ԱՏԱՌՎ ՍԿՍՈՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ.
ԿԵՍ ԺԱՄՆՈՅ ՎԻԵՈ ՇԼՈՒՆԵՐ ԱՆՁԻՆ
ԱՆՈՒՆՈՎ, ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ
Դիմել՝ ԱՐԱ ԲԵԼԵՃԵԱՆ ՀԱՍՏ.
Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item description and Price. Includes items like Սուրիական թղթուկի, Ռաքեան տիւար, Պահրէյնեան տիւար, etc.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like Անգլիական մէկ ոսկի, Իրանեան մէկ ոսկի, Օսմանեան մէկ ոսկի, etc.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like ՍՈԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ, Ա. կարգի, Բ. կարգի, բաժնետիրոջ

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item description and Price. Includes items like Լոնտոնի սակարանի մէջ, դրամանշններու փոխանակման սակը, Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը, etc.

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Հեռագրագուրիւն չունիք, բայց ուրիշներ կը կարդան ձեր միտքը եւ կ'ուզեն օգտակար ըլլալ ձեզի՝ ըստ բաղանջի:

☆ՑՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Այնքան ուժակաւ եւ ոգեւորուած պիտի ըլլաք այսօր, որ պիտի ուզէք ամէն տեսակ գործ կատարել միանգամայն: Սակայն ձեր գործերը կատարեցէք դասաւորելով, առաջնահերթէն սկսելով:

☆ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Ձեր ձեռքին ունիք բոլոր բարբերը, իրագործելու համար ձեր փափաքած աշխատանքը: Այսօր ձեզ կ'սպասեն ուրախանալու սքանչելի առիթներ:

☆ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յունիս)
Եթէ կ'ուզէք աշխատանքի մարդիկ մէջ յաւելում մը պահանջել ձեր բոշակին համար, հարկ է որ դուք ըլլաք խթանող, որպէսզի մարդիկ շարժին: Պատրաստ էք խթանելու:

☆ԱՌԻԻՄ (24 Յունիսէն 23 Օգոստոս)
Պիտի ունենաք այնպիսի զգացում մը որ ձեզի պիտի յիշեցնէ «այս ալ տեսնուած է» մտածումը: Իսկ դուք դաս պիտի քաղէք այդ միտքերէն եւ նոյն սխալ պիտի չկրկնէք:

☆ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Նիւթական խնայողութեան տեսակետէն լաւ ճամբու մէջ էք: Պիտի կարենաք հաստատ պահել ձեր տնտեսական վիճակը: Բայց չըլլաք որ ետ դարձ մը ընէք: Պահպանեցէք ձեր ներկայ կացութիւնը:

☆ԿՇԻՌԻ (Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Եթէ բարեկամութիւն հաստատած էք անձի մը հետ, ու այդ անձը իբրեւ ձեզի պիտի ընէ մը երբեք եւ դանդաղաշարժ մըն է, ձեզի կը մնայ համբերութեամբ լսել եւ երկխօսութեան նստիլ անոր հետ, որպէսզի կարենաք արգիլել ձեր հեռանկարը:

☆ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Այսօր պիտի արթնաք մեծ ոգեւորութեամբ եւ աշխուժ տրամադրութեամբ, եւ ձեր այս տրամադրութիւնը բոլորին պիտի փոխանցէք ամբողջ օրուան ընթացքին:

☆ԱՂԵՂՆԱԿՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Այսօր փորձուիք ունենալ մատուցելու տրամադրութիւն մը պիտի ունենաք: Եթէ նոյնիսկ ամուսնացած էք, դարձեալ պիտի չկարենաք դիմադրել այդպիսի փորձութիւններու: Արդեօք պիտի կարենաք քաջել ձեր ետանդը:

☆ԱՅՅԵՂԶԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Փոքր բարեխաղում մը պիտի ստեղծուի ձեր շուրջիններուն հետ ձեր կապին մէջ: Այսուհանդերձ, պէտք է գուցայ պահէք ձեր լեզուն, կոշոք ձեր խօսքերը, որպէսզի հետո մնաք անխաղաղ վիճակ ստեղծելու:

☆ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ո՛չ մէկ դժուարութիւն պիտի ունենաք յարաբերելու ձեր ուզած անձներու հետ: Արեւմտ կատարեցէք ձեր ուզածը, եւ առջը նետուեցէք նոր անձերու հետ տեսակցելու:

☆ԶՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Ձեզի մօտիկ անձ մը ձեզի պիտի բացայ իր սիրտը եւ ձեզի պիտի վստահի լուրջ գաղտնիք մը: Ձեզի կը մնայ սրտակցիլ եւ պահել իր գաղտնիքը:

ՕՐԱՍԵՏՈՐ

Panasonic
ԸՆՈՒՍԵՍԻԼ
Image of a Panasonic television and speakers.

Table with 3 columns: Time, Program Name, and Channel. Includes programs like 10:00 - Սապահո, 13:00 - Մարտի հանա, 14:00 - Եւրոնիւզ, etc.

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5162

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ


Table with 10 columns and 10 rows for a lottery draw.

Table with 2 columns: ԸՈՐԻՉՈՆԱԿԱՆ (1-10) and ՈՒՂԱՐԱՅԵԱՏ (1-10) with corresponding numbers.

ԹԻԻ 5161
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ
Table with 10 columns and 10 rows for a lottery draw.

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ՎՇԽԱՐՇ



### ՄՈՆՏԻԱԼ 2002

# ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԱՏԵՂԾԵՑԻՆ ՄՐՅԱՇԱՐՔԻՆ ԵՐՐՈՐԴ ԱՆԱԿՆԿԱԼԸ

ի մէջ (1930ի Մոնտիալ) նշանակած էին երեք կոլ:

Յամենայնդէպ, Միացեալ Նահանգներու ֆուտպոլի ազգային խումբին արձանագրած այս յաղթանակը կու տայ լատինացի ապացոյցը, որ ամերիկացիք հետզհետէ սկսած են աւելի փայլուն արդիւնքներ արձանագրել ֆուտպոլի մէջ ալ, թէեւ Միացեալ Նահանգներու մէջ նախապատուութիւնը աւելիով կը տրուի *Էն. Պի. Էյ. Ին.* ամերիկացի ֆուտպոլիստն ալ *հաքիին*:

կրած պարտութեան սակայն, ան ընդունեց, որ անոնք աւելի զօրաւոր կազմ մըն էին եւ աւելի լաւ պատրաստուած Մոնտիալին, քան իր մարզիկները, որոնք աւելի նուազ ժամանակ ունէին պատրաստուելու մրցաշարքին:

Նախքան այս մրցու-

ղի ունեցաւ Իպարաքի մէջ (Ճափոն), վերջ գտաւ 1-1 արդիւնքով: Մրցումին ներկայ էր 36 հազար համակիր:

Միւրոյալ Քլոյպի նշանակած կոլէն ետք (19րդ) կը կարծուէր, որ Գերմանիա իր երկրորդ յաղթանակը արձանագրելով պիտի ապահովէ Ֆ. հանգրուանին իր տոմարը: Սակայն մրցումին կորսուած վայրկեաններուն, Ռոպի Քիւնի կողմէ նշանակուած կոլը, այլ ըսելիք ունէր. որովհետեւ իր արձանագրած այս երկրորդ հաւասարութեամբ, Այիթ իոյս ունեցաւ հասնելու Ֆ. հանգրուանին: Ա. հանգրուանին, անոր վերջին մրցակիցը պիտի ըլլայ Մէլուտական Արաբիա, որ այսօր պիտի ձակատի Քամեռուի հետ, որ առաջին մրցումին 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած էր Այիթի հետ:



Ռոպի Քիւն, որ կը ճշգնակէ Այիթի հաւասարութեան կոլը, Օլիվեր Զանցի բերդէն ցերս:

Նիլըն (Պելճիքա) եւ Մասիէժ Վիերպովուքի (Լեհաստան):

Վերջապէս երրորդ եւ վերջին մրցումին, Փուսանի մէջ (Հարաւային Բորնէա) Ֆրանսա կը մրցի Ուրուկուէյի դէմ (Ա. խմբակ): Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 14:30ին:

Երկու խումբերն ալ, որոնք պարտութիւն կրեցին իրենց կատարած առաջին մրցումին, յաղթանակէ այլընտրանք չունին, յաջորդ հանգրուանին տուն մը կարենալ ապահովելու համար:

Նախապէս անոնք իրարու դէմ յանդիման եկած են երկու անգամ: Առաջինին (1966) Ուրուկուէյ 2-1 արդիւնքով պարտութեան մատնած է Ֆրանսան (Մոնտիալ), իսկ երկրորդին (1985ին) Ֆրանսա՝ Ուրուկուէյը, 2-0 արդիւնքով (բարեկամական մրցում):

Ուրուկուէյ, որ երկու անգամ շահած է Մոնտիալին բաժակը (1930ին եւ 1950ին), 10րդ անգամ ըլլալով ներկայ է Մոնտիալին, մինչ Ֆրանսա՝ 11րդ անգամ ըլլալով:

Օրուան իրաւարարն է Ֆիլիպէ Ռամոս Ռիօ (Մեքսիքա), իսկ կողմի իրաւարարները՝ Վլադիմիր Ֆերնանտէս (Սալվատոր) եւ Քրիշթա Զարլ (Անժիլուա):



Ճոն Օպարայըն (Մ. Ն.), որ իրաւաստուելու ձեռով մը կը սոցէ իր ճշգնակած կոլը:

Միացեալ Նահանգներու մարզիչ Պրուս Արենս, որ 5-4-1 իսողանոճ մը կիրարկած էր, յաջողեցաւ պարտութեան մատնել Փորթուգալի մարզիչ Անթոնիօ Օլիվէյրայի կիրարկած խաղաոճը՝ 4-4-2:

Մրցումէն ետք, Օլիվէյրայ յայտնեց, թէ մրցակից կազմին ցուցաբերած խաղարկութենէն ամբողջութեամբ անակնկալի եկած է, որովհետեւ նախքան մրցումը կը կարծէր, որ նոյնիսկ կոլ պիտի չստանայ մրցակիցէն: Հակառակ իր կազմին

մը. Քուպի մէջ (Ճափոն) տեղի ունեցաւ օրուան առաջին մրցումը՝ Ռուսիոյ եւ Ռումուլի միջեւ, 31 հազար համակիրներու ներկայութեան: Հանգրուանի կազմին արձանագրած այս յաղթանակին, Ռուսիոյ մարզիչ

Մրցումէն ետք, Գերմանիոյ մարզիչ Ռուտի Վեյլը յայտնեց, թէ Այիթի մարզիկներուն պայքարի ոգին էր, որ պատճառ դարձաւ հաւասարութեան:

Նշեցք, թէ Միւրոյալ Քլոյպ այժմ իր նշանակած չորս կոլով կը մնայ կոլաշարքըներու պարագլուխի դիրքին վրայ:

### ԱՅՍՕՐՈՒԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Այսօրուան յայտագիրին վրայ են երեք մրցումներ, որոնք կը սկսին առաւօտեան ժամը 9:30ին սկսեալ: Երկու մրցումները տեղի կ'ուն-

Դանիա՝ Ուրուկուէյը (2-1): Սենեկալ, որ առաջին անգամ ըլլալով Մոնտիալին իր մասնակցութիւնը կը բերէ, նախապէս միայն մէկ անգամ դէմ յանդիման եկած է Դանիոյ դէմ, այդ ալ 1977ին, երբ 3-2 արդիւնքով պարտուած է անկէ, բարեկամական այդ մրցումին ընթացքին: Դանիա, Մոնտիալին իր մասնակցութիւնը կը բերէ երրորդ անգամ ըլլալով (նախապէս՝ 1986ին եւ 1998ին): Օրուան իրաւարարը պիտի ըլլայ Քարլոս Մաթիս (Կուսթաբալա), իսկ կողմի իրաւարար-

բիա, որ յաջորդաբար երրորդ անգամ ըլլալով կը մասնակցի Մոնտիալին (նախապէս՝ 1994ին եւ 1998ին), պարտութիւն մը կրելու պարագային պիտի հանդիսանայ առաջին խումբը, որ դուրս պիտի մնայ 2002ի Մոնտիալէն: Քամեռուի հիւգոյները անգամ ըլլալով կը մասնակցի Մոնտիալին (նախապէս՝ 1982ին, 1990, 1994ին եւ 1998ին): Օրուան կեդրոնի իրաւարար պիտի ըլլայ Թերթէ Նոկլը (Նորվեգիա), իսկ կողմի իրաւարարները՝ Ռոյանտ Վան Ստրենը՝ այսօրուան եւ վաղուան մրցումներուն յայտագիրը:

### ԻՐ ԿԱՏԱՐԱԾ «ԳԵՐԱՍՆՈՒԹԵԱՆ» ՀԱՄԱՐ ՌԻԿԱՆՏՈ ՏՈՒԳԱՆՔԻ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱՒ



Ռիկալտօ, որ գետին ինկած էր, Պրազիլ - Թուրքիա մրցումին վերջին վայրկեաններուն:

Պրազիլցի Ռիկալտօ հանդիսացաւ առաջին մարզիկը, որ 2002ի Մոնտիալին ընթացքին տուգանքի ենթարկուեցաւ, իր կատարած «դերասանութեան» համար, յայտնեց ՖիՖԱ-ն մէկ պատասխանատուն՝ աւելցնելով, որ ան կը ստանայ տասը հազար վոլիցերիական ֆրանքի (շուրջ 6400 ամերիկեան տոլար) տուգանք մը:

ՖիՖԱ-ի պատճառով յանձնախումբը, դիտելով ետք անցեալ Երկուշաբթի, 3 Յունիսին տեղի ունեցած Պրազիլ - Թուրքիա մրցումին *վիտօ*-երիվը, թէեւ յանցաւոր նկատեց թուրք մարզիկ Հաքան Ուսալը, անոր ոչ մարզավայել կեցուածքին եւ կատարած արարքին համար, սակայն նաեւ յանցաւոր նկատեց Ռիկալտօն, որ իր ստացած այդ հարուստ ծէն ետք ձեռքերով ծածկած էր դէմքը: ՖիՖԱ-ն այդ ծէնը անտրուաբար չէր հարուստացած, այլ՝ ոտքերը:

Յամենայնդէպ, Ռիկալտօ պետք է ինքզինք քիչ մը բախտաւոր զգայ, որովհետեւ ան նոյնիսկ կրնար մէկ մրցում կախակալուի:

### ՄՈՆՏԻԱԼԻ ԱՌԱՋԻՆ 16 ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

2002ի Մոնտիալի բացման մրցումէն (31 Մայիս) մինչեւ երկէ տեղի ունեցան 16 մրցումներ (առանց նկատի ունենալու Գերմանիա - Այիթ մրցումը), որոնց ընթացքին մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերող 32 խումբերը այսպիսով կատարած եղան մէկական մրցում: Յարզ Գերմանիա եւ Այիթ կը հանդիսանան միակ խումբերը, որոնք կատարած են երկուքական մրցում:

Ստորեւ՝ կատարուած 16 մրցումներուն վիճակագրութիւնը.

- Այդ 16 մրցումներուն ընթացքին արձանագրուեցան 12 յաղթանակ եւ 4 հաւասարութիւն:
- Նշանակուած 46 կոլերուն 18ը նշանակուեցան Ա. կիսախաղին, իսկ 28ը՝ Բ. կիսախաղին:
- Ամէնէն աւելի շատ ֆուտբոլ կատարուեցան Ճափոն - Պելճիքա մրցումին՝ 58 ֆուտ (կրթաբանչիւր խումբ 29 ֆուտ):
- Ամէնէն աւելի նուազ ֆուտբոլ արձանագրուեցան Ուրուկուէյ - Դանիա մրցումին (21): Դանիա հանդիսացաւ նաեւ ամէնէն աւելի նուազ ֆուտբոլ կատարողը (8):
- Ամէնէն աւելի շատ դեղին քարտերը գործածուեցան Փարակուէյ - Հարաւային Աֆրիկէ մրցումին (8): Թէեւ Խրուակիա - Մեքսիքա մրցումին ոչ մէկ մարզիկ դեղին քարտ ստացաւ, սակայն այս մրցումին է, որ գործածուեցաւ մրցաշարքին առաջին կարմիր քարտը:
- Իրաւարարները երեք անգամ գոր-

ծածեցին իրենց կարմիր քարտը, որոնցմէ երկուքը՝ Թուրքիոյ դէմ, իսկ 60 անգամ իրենց դեղին քարտը, առանց նկատի ունենալու կարմիր քարտ ստացող մարզիկներուն պարագան:

- Ամէնէն աւելի շատ ֆուտ կատարող (8) մարզիկը եղաւ Միլոսիւսիօ Չուլա (Հարաւային Աֆրիկէ), իսկ ամէնէն աւելի շատ ֆուտներ (դարձեալ 8) ստացող մարզիկները եղան Նիքօ Քոստա (Պրուակիա) եւ Հաճի Տիւօֆ (Սենեկալ):
- Իրաւարարները հինգ անգամ փեցալի սուլեցին, որոնց հինգն ալ կոլի վերածուեցան:
- Ամէնէն աւելի շատ քողերները ձեռք ձգեցին Արժանթին եւ Նիւզլանդիա (11), մինչ ոչ մէկ քողեր ձեռք ձգեց Սենեկալ՝ իր կատարած առաջին մրցումին (Ֆրանսայի դէմ):
- Ամէնէն աւելի շատ օֆ-սայտի ծուղակը ինկողը եղաւ Սենեկալ (11 անգամ):
- Ոչ մէկ մրցում վերջ գտաւ 0-0 հաւասարութեամբ:
- Միայն մէկ մարզիկ սխալմամբ իր բերդէն ներս կոլ մը նշանակեց՝ իսթա-նբուլա Սթրուէյ (Հարաւային Աֆրիկէ):
- Ամէնէն արագ կոլը նշանակեց Ճոն Օպարայըն (Մ. Ն., հարզ վայրկեաններ), ամէնէն աւելի շատ կոլ նշանակող խումբը եղաւ՝ Գերմանիա (8), իսկ ամէնէն աւելի շատ կոլ նշանակող մարզիկը Միւրոյալ Քլոյպ (Գերմանիա, 3 կոլ):

● ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Դանիա - Սենեկալ	9:30ից
Քամեռու - Մէլուտական Արաբիա	12:00ից
Ֆրանսա - Ուրուկուէյ	14:30ից

● ՎԱԳԸ	9:30ից
Շուէտ - Նիկերիա	12:00ից
Սպանիա - Փարակուէյ	12:00ից
Արժանթին - Անգոլա	14:30ից

### «ԱՉԳԱԿ»Ի ՄՈՆՏԻԱԼԻ ՄՐՅԱՆՔՆԵՐ

«Աչգակ»ի Մոնտիալի գլխաւոր մրցանքը աւարտած է: Արդիւնքները կը հրապարակուին Մոնտիալէն ետք:

Բացառիկ մրցանքները կը վերաբերին յատուկ մրցումներու, անջատաբար. անոնք պիտի հրապարակուին օրը օրին:

### «ԱՉԳԱԿ»Ի ՄՈՆՏԻԱԼԻ ԲԱՅԱՌԻԿ ՄՐՅԱՆՔ

- 1.- Ո՞վ պիտի ըլլայ Ուրբաթ, 7 Յունիսին Սափորոյի մէջ (Ճափոն) Զ. խմբակէն ներս կայանալիք Արժանթին - Անգոլա մրցումին յաղթականը: (10 նիշ)
  - 2.- Ի՞նչ պիտի ըլլայ մրցումին արդիւնքը: (15 նիշ)
  - 3.- Որո՞նք պիտի նշանակեն կոլերը: (25 նիշ):
- Անուն.....  
Մականուն.....  
Հեռաձայն.....

Սոյն մրցանքին կտրօսները «Աչգակ»ի խմբագրատուն պէտք է հասած ըլլան առաւելագոյնը՝ մինչեւ Ուրբաթ, 7 Յունիսի կէսօր:

Առաւելագոյն նիշ ապահովող մասնակիցը կ'ըլլայ յաղթականը: Հաւասար նիշերու պարագային, տեղի կ'ունենայ վիճակաձգութիւն:

Սոյն մրցանքին չեն կրնար մասնակցիլ «Աչգակ»ի պաշտօնէտները:

Յաղթականը կը շահի «Ալօ Սիւլահեան» հաստատութեան կողմէ տրամադրուած IGLOO վաճառահիշով դաշտագնացութեան սառնարան մը:

Օլէկ Ռոմանցեւ ըսաւ, թէ բաւարարուած չէր իր մարզիկներուն ցուցաբերած խաղարկութենէն: Յաղթական կազմին երկու կոլերը նշանակեցին Եգոր Թիթով (59րդ) եւ Վալերի Քարփին (64րդ)՝ փենսիլթիով: Ռուսիոյ կազմէն կը բացակայէր *փլյանէյ* ջոր Ալեքսանտր Մոսթովոյ (վիրաւոր):

Երէկուան երրորդ եւ վերջին մրցումը, որ տե-

նեան Ա. խմբակէն ներս, իսկ երրորդը՝ Ե. խմբակէն ներս: Սակայն մրցումը տեղի կ'ունենայ Թաիլանդի մէջ (Հարաւային Բորնէա), ուր Դանիա կը մրցի Սենեկալի դէմ (59րդ) եւ Վալերի Քարփին (64րդ)՝ փենսիլթիով: Ռուսիոյ կազմէն կը բացակայէր *փլյանէյ* ջոր Ալեքսանտր Մոսթովոյ (վիրաւոր):

Երէկուան երրորդ եւ վերջին մրցումը, որ տե-

ները՝ Ֆերենք Սպեքիլի (Հունգարիա) եւ Վիսլա Քրիշնան (Սինկափուր):

Կէսօրուան ժամը 12:00ին (Պէյրուի ժամը) տեղի կ'ունենայ 7րդ օրուան երկրորդ ձակատումը՝ Քամեռուի եւ Մէլուտական Արաբիոյ միջեւ (Ե. խմբակ): Մրցումը տեղի կ'ունենայ Սալթամայի մէջ (Ճափոն):

Մէլուտական Արա-

